

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
1970-1987թթ.

Երկրի կամ նրա որևէ վարչական շրջանի տնտեսական իրադրությունը բնութագրող բազմաթիվ ցուցանիշների շարքում կարևորվում է նաև առկա աշխատունակ բնակչության զբաղվածության թվի որոշումը, որի ուսումնասիրությունն ունի գիտակիրառական և ճանաչողական կարևոր նշանակություն:<sup>1</sup>

Բնակչության զբաղվածության պատկերի վերհանումը, աշխատանքային ռեսուրսների և էթնո-ժողովրդագրական շարժերի միջև գոյություն ունեցող կապերի, աշխատունակ բնակչության փոփոխությունների դինամիկայի գնահատումը պահանջում են բնակչության տարիքային տարբեր խմբերի թվաքանակի ցուցանիշների, աշխատունակների սեռատարիքային կառուցվածքի, զբաղվածության շարժի աստիճանի, արդյունաբերա-արտադրական ձեռնարկություններում աշխատողների թվի, աշխատունակ բնակչության կրթական մակարդակի և այլ ցուցանիշների համադրություն:

Լենինականի բնակչության զբաղվածության խնդիրը 1970-1987թթ. ընթացքում գրեթե չի ուսումնասիրվել: Մինչդեռ, ի թիվս այլ որակների, նման ուսումնասիրությունը օգտակար է նաև հետագա՝ 1990-ական թթ. բնակչության զբաղվածության թվի շարժի պատճառահետևանքային կապերի բացահայտման առումով: Քաղաքային բնակչության զբաղվածության թվաքանակի շարժն ուսումնասիրելիս օգտվել ենք հիմնականում պաշտոնական վիճակագրության տվյալներից և Շիրակի պետական մարզային արխիվի նյութերից:

1. *Աշխատունակ բնակչության թվի շարժը.* Աշխատունակ բնակչությունը ֆիզիկական և մտավոր հնարավորություններով հանրային աշխատանքին լիարժեք մասնակցելու ունակ բնակչությունն է: Համաշխարհային վիճակագրության մեջ ընդունված է աշխատունակ տարիք համարել 15-ից 64-ը:<sup>2</sup> Խորհրդային տարիներին Հայաստանում և ամբողջ Միությունում դեռ 1928 թ. իբրև աշխատանքային տարիք է սահմանվել 16-59-ը տղամարդկանց և 16-54-ը՝ կանանց համար:<sup>3</sup>

1970-1987թթ. մեր հանրապետությունում, այդ թվում նաև Լենինականում դիտվել է աշխատունակ բնակչության թվի կայուն աճ: Դա բացատրվում է առաջին հերթին նրանով, որ 1960-ական թթ. վերջերին աշխատանքային տարիք է մուտք գործել 1950-ական թթ. ծնված սերունդը, իսկ այդ տարիներին թե՛ Հայաստանում և թե՛ Լենինականում գրանցվել է ծնունդների թվի քանակական աճ: Միաժամանակ աշխատանքային տարիքից դուրս է եկել այն սերունդը, որը Հայրենական պատերազմի տարիներին առավել մեծ կորուստներ է կրել:

Աշխատունակ բնակչության քանակական ցուցանիշի վրա ազդող գլխավոր գործոնը՝ ժողովրդագրականն է, որը, ինչպես հայտնի է, ըստ տարիների փոփոխություններ է կրում:<sup>4</sup> Չնայած 1970-1987 թթ. Լենինականում աշխատունակ բնակչության թվաքանակի անընդհատ աճին՝ նրա սեռատարիքային կազմում զգալի փոփոխություններ չեն արձանագրվել: 1970 թ. Լենինականում տղամարդիկ կազմել են աշխատունակ տարիքի բնակչության թվի 48,5%-ը, 1979-ին՝ 48,4%-ը և 1987-ին՝ 48,9%-ը:<sup>5</sup> 1970 թ. համեմատությամբ 1987 թ. մինչև 14 տարեկանների թիվն ավելացել է 11,7 հազարով կամ 20,5%-ով, աշխատունակ բնակչության թիվը՝ 38,1 հազարով կամ 39,5%-ով, տարեցների թիվը՝ 14 հազարով կամ 130,8%-ով: Այսինքն՝ այդ տարիներին աճի բարձր ցուցանիշներ են գրանցվել տարեցների և հատկապես աշխատունակ բնակչության աճի տեմպերում: Դրա պատճառները մի քանիսն են՝ 1960-ական թթ. սկսած՝ ծնելիության գոր-

<sup>1</sup> Д. В а л е н т е й, Основы теории народонаселения, М., 1977, стр. 215.

<sup>2</sup> Հ. Գրգեարյան, Ն. Հարությունյան, Տնտեսական աշխարհագրության տեղեկատու բառարան, Եր., 1982, էջ 29:

<sup>3</sup> Д. В а л е н т е й, указ. соч., стр. 170.

<sup>4</sup> Լ. Վախյան, Հայկական ՄՍՀ տնտեսական աշխարհագրություն, Եր. 1981թ., էջ 90:

<sup>5</sup> ՀՀ ԱԿԾ Շիրակի մարզային գործակալության արխիվի տվյալներ, գիրք 8, թերթ 21:

ծակցի նվազումը, կյանքի սպասելի տևողության մակարդակի բարձրացումը, այլ բնակավայրերից աշխատունակ տարիքի բնակչության հոսքը քաղաք և այլն: Ի դեպ, այդ տարիներին հանրապետության քաղաքային աշխատունակ բնակչության թվի աճի գործակիցը գերազանցել է Լենինականի աշխատունակ բնակչության թվի աճի գործակիցին:<sup>6</sup>

**Աղյուսակ 1.** 1970-1987թթ. Լենինականի բնակչության թվի շարժի ցուցանիշներն ըստ տարիքային խմբերի ( ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալներ, գիրք 8, թերթեր 18-24)

Տարիքային խմբեր	1970		1979		1987	
	թիվը. հազար մարդ	%	թիվը. հազար մարդ	%	թիվը. հազար մարդ	%
մինչև 14 տարեկան	57,2	34,8	64,5	31,2	68,9	30,2
15-64 տարեկան	96,5	58,7	122,6	59,3	134,6	59,2
65 և բարձր	10,7	6,5	19,5	9,5	24,7	10,6
Ընդամենը	164,4	100	206,6	100	228,2	100

2. *Ջրադիւթության աստիճանը.* Աշխատունակ բնակչության թվի աճի վրա կարևոր ազդեցություն ունի նաև բնակչության զբաղվածության աստիճանի փոփոխությունը: Ամեն մի երկրում, շրջանում կամ բնակավայրում տվյալ պահի համար ձևավորվում է աշխատանքային ռեսուրսների որոշակի հաշվեկշիռ, որը ցույց է տալիս, մի կողմից առկա աշխատունակ տարիքի բնակչության կազմը, մյուս կողմից՝ նրանց օգտագործման վիճակը: Աշխատունակ բնակչության զբաղվածության ուսումնասիրությունը հանրային տնտեսության հեռանկարային ու ընթացիկ պլանավորման համար կարևոր նշանակություն ունի:

Աշխատունակ բնակչության զբաղվածության աստիճանը համեմատաբար ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է որոշել աշխատունակ տարիքի մարդկանց զբաղվածության գործակցի մեծությունը: Աղյուսակ 2-ից երևում է, որ 1987 թ. 1970 թ. համեմատությամբ աշխատունակ բնակչության թիվն աճել է 1,4 անգամ: 1970 թ. քաղաքի հանրային և օժանդակ տնտեսությունում զբաղվածների ու ուսումնական հաստատություններում (բուհեր, տեխնիկումներ և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ) սովորողների թիվը կազմել է աշխատունակ բնակչության թվի 68,4 %-ը, 1979-ին՝ 70,8%-ը և 1987-ին՝ 78,6%-ը: Ասենք, որ այդ տարիներին թե Հայաստանում, թե Լենինականում աշխատունակ բնակչության 7-8% -ը զբաղված է եղել օժանդակ տնտեսության ոլորտում, ինչը 2,3-3,0 անգամ գերազանցել է միութենական համապատասխան ցուցանիշը :<sup>7</sup>

1987 թ. 1979թ. համեմատությամբ Լենինականի աշխատունակ տարիքի բնակչության թիվը ավելացել է 19,4 հազարով կամ տարեկան՝ միջինը 2,4 հազարով: Աճի պահպանման այս տեսլերի դեպքում 2000թ. Լենինականի աշխատունակ տարիքի բնակչության թիվը պիտի կազմեր 164,9 հազար մարդ, սակայն այդ տարիների ընթացքում բնական աղետի պատճառով, հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ գործընթացների արդյունքում 2000թ. քաղաքում առկա աշխատունակ բնակչության թիվը կազմել է ընդամենը 65,6 հազար,<sup>8</sup> այսինքն 99,3 հազարով պակաս:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ 1970-1987թթ. Լենինականի աշխատունակ տարիքի բնակչության զբաղվածության աստիճանը եղել է միջին հանրապետական մակարդակի, ինչն էլ իր դրական ազդեցությունն է ունեցել քաղաքի

<sup>6</sup> *Население СССР 1987г, ст. сборник, М., 1988, стр. 89.*  
<sup>7</sup> *С. Карапетян, Л. Овсебян, Региональные особенности социально-демографического развития Армянской ССР, Ер., 1986, стр. 61.*  
<sup>8</sup> Հ. Ս ա ղ ա յ ա ն, Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, *Գյուղրու աշխատանքային ռեսուրսների և բնակչության զբաղվածության վերլուծման փորձ (1990-2000թթ), ԳՄԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ.3, Գյուղրի, 2000, էջ 156:*

սոցիալ-տնտեսական զարգացման վրա և զբաղվածության ապահովման խնդրում լարվածություն չի առաջացրել:

*Աղյուսակ 2. 1970-1987 թթ. Լենինականի աշխատունակ բնակչության զբաղվածության թվաքանակի շարժի ցուցանիշները (ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալներ, գիրք 7, թերթ 45)*

	1970		1979		1987	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%
Աշխատունակ բնակչություն այդ թվում՝	96,5	100	114,3	100	134,6	100
բանվորներ և ծառայողներ	54,0	55,9	65,2	57,0	78,3	58,6
յժանդակ տնտ. զբաղվածներ	4,9	5,0	6,3	5,5	13,5	10,0
ուսանողներ	7,3	7,5	9,4	8,2	13,5	10,0
այլք	30,3	31,6	33,4	29,3	29,3	21,4

3. *Աշխատունակ բնակչության տեղաբաշխումն ըստ հանրային տնտեսության ճյուղերի.* 1970-1987թթ. Լենինականի աշխատունակ բնակչության թվի բաշխման փոփոխությունը հանրային տնտեսության ճյուղերում ճիշտ գնահատելու համար կարևորում ենք այն համեմատության մեջ դնել 1960-ականների համապատասխան ցուցանիշների հետ: 1960թ. հանրային տնտեսությունում աշխատողների թիվը Լենինականում կազմել է 36515 մարդ, որի 57,9%-ն աշխատել է արդյունաբերական ձեռնարկություններում, 6,4%-ը՝ շինարարությունում, 3,2%-ը՝ գյուղատնտեսությունում, 9,5%-ը՝ կրթության և առողջապահությունում և մնացածը՝ տնտեսության այլ ճյուղերում (տե՛ս աղ. 3): Ինչպես տեսնում ենք, քաղաքի աշխատունակ բնակչության կեսից ավելին աշխատել է նյութական արտադրության ոլորտում: 1960-ական թվականները Լենինականի արդյունաբերության և սպասարկման ոլորտների զարգացման կարևոր տարիներ էին: Համեմատած 1961թ. հետ՝ 1987թ. բանվորների և ծառայողների թիվն ավելացել է 40034 մարդով կամ աճել է 2,1 անգամ, աշխատողների թիվն ավելացել է տարեկան միջինը 1540 մարդով, ինչը մեր հանրապետության մասշտաբով միջին ցուցանիշ է: Բանվոր-ծառայողների թիվը կտրուկ ավելացել է հատկապես 1961-1970 թթ.՝ 17810 մարդով: Դա բացատրվում է աշխատունակ բնակչության ակտիվ ներհոսքով. Ռուսաստանից և Ուկրաինայից հազարավոր երիտասարդ աղջիկներ եկան աշխատելու քաղաքի թեթև արդյունաբերական ձեռնարկություններում: 1961-1987թթ. աշխատողների թվի ավելացման տեմպերը բարձր էին մասնավորապես արդյունաբերության, կրթության և առողջապահության ոլորտներում: Այդ տարիներին արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվն աճել է 1,8 անգամ, իսկ կրթության և առողջապահության ոլորտներում՝ 3,3 անգամ:

Բանվորների և ծառայողների թվի բաշխման փոփոխության առանձնահատկությունները ներկայացնելու համար անհրաժեշտ է վերլուծել արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի շարժն ըստ առանձին ճյուղերի: Աղյուսակ 3-ից երևում է, որ 1961-1983 թթ. փոքր ձեռնարկությունների (մինչև 300 աշխատող) թվի էական փոփոխություն չի դիտվել. այդ թիվը 23-ից հասել է 25-ի: 1961թ. 23 փոքր ձեռնարկություններից 4-ը եղել են թեթև արդյունաբերական, 9-ը՝ մեքենաշինական, 8-ը՝ սննդի արդյունաբերության և 4-ը՝ այլ արդյունաբերական ձեռնարկություններ: 1983 թ. համապատասխանաբար 7-ը՝ թեթև արդյունաբերական, 1-ը՝ մեքենաշինական, 8-ը՝ սննդի և յոթը՝ այլ ձեռնարկություններ: Այսինքն՝ նկատելի փոփոխություն կա մեքենաշինական ձեռնարկությունների թվում, որ պակասել է յոթով, մի փոքր՝ 3-ով ավելացել է թեթև արդյունաբերական փոքր ձեռնարկությունների քանակը, մնացած ձեռնարկությունների թիվը մնացել է անփոփոխ: Եթե 1961թ. Լենինականի 23 փոքր արդյունաբերական ձեռնարկություններում աշխատել են 42 արդյունաբերական ձեռնարկություն-

\* *Տնային տնտեսուհիներ, հարակից և սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողներ (Արանց թիվը առանձին-առանձին պարզելը դժվար է, այդ պատճառով նպատակահարմար ենք գտել աղյուսակում դրանք ներկայացնել միասին):*

ներում աշխատող բանվորների և ծառայողների 13,6%-ը, ապա 1975թ-ին՝ 9,9%-ը, իսկ 1983թ-ին այդ ցուցանիշը կազմել է 7,6 %: Այսինքն՝ այդ տարիներին տեղի է ունեցել քաղաքի փոքր արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների տեսակաբար թվի աստիճանական նվազում, թեև աշխատողների թիվը, հակառակը, դրանցում աճել է՝ 2876-ից հասնելով 3704-ի:

**Աղյուսակ 3.** Լեռնականի արդյունաբերական ձեռնարկությունների բաշխումն ըստ մեծության (ՀՍՍՀ Վիճակագրության մեթոդական դասակարգման հիման վրա, Շիրակի մարզային պետական արխիվ, ֆ. 9, ց. 1, գործ 12, 580, 619 )

		ձեռնարկությունների և աշխատողների թիվը					
		1961		1975		1983	
		ձեռնարկու- թյուն. թիվը	աշխատող. թիվը	ձեռն. թիվը	աշխատ. թիվը	ձեռն. թիվը	աշխատ. թիվը
մինչև 300 աշխատող	փոքր	23	2876	22	3508	25	3704
301-500	միջին	8	3084	10	3412	1	789
501-1000	խոշոր	8	5211	11	7885	12	8624
1001-ից ավելի	խոշորա- գույն	3	9979	8	20379	13	35831
Ընդամենը		42	21150	51	35184	51	48948

1961թ. համեմատությամբ՝ 1983թ. Լեռնականի միջին մեծության ձեռնարկությունների (301-500 աշխատող) թիվը կարող նվազել է. ութ ձեռնարկություններից մնացել է մեկը: Պատճառը ձեռնարկությունների խոշորացումն է, որ այդ տարիներին տեղի է ունեցել հիմնականում միջին մեծության ձեռնարկությունների հաշվին՝ արձանագրելով քաղաքի նմանատիպ ձեռնարկություններում աշխատողների թվի նվազում հատկապես 1975-1983թթ.: 1961թ. Լեռնականի 8 միջին ձեռնարկություններում աշխատողների թիվը կազմել է նրա 42 ձեռնարկություններում աշխատողների թվի 14,6%-ը, 1975-ին՝ (51 ձեռնարկություններում) համապատասխանաբար 9,7%-ը և 1983-ին՝ 1,6%-ը: Դրան հակառակ՝ այդ տարիներին Լեռնականում ավելացել են խոշոր (501-1000 աշխատող) և խոշորագույն ձեռնարկությունները (1001-ից ավելի աշխատող). խոշոր ձեռնարկությունները՝ 4-ով, խոշորագույնները՝ 10-ով: 1961թ. քաղաքի ութ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունում աշխատել է 5211 մարդ: Սա կազմել է 42 արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի 24,6%-ը, 1975թ.՝ 7885 աշխատող (22,4%-ը) և 1983թ.՝ 8624 աշխատող (17,6%-ը): Ինչպես տեսնում ենք, խոշոր ձեռնարկությունների թվի աճին զուգընթաց նվազել է աշխատողների տեսակաբար թիվը:

Արդեն նշեցինք, որ խոշորագույն ձեռնարկությունների թիվը Լեռնականում 1961-1983թթ. ավելացել է՝ երեքից հասնելով 13-ի: Եթե 1961թ. երեքն էլ թեթև արդյունաբերական են եղել, 1975թ. 8 խոշորագույն ձեռնարկություններից 5-ը թեթև արդյունաբերական, 2-ը՝ մեքենաշինական և մեկը կենցաղային էին: 1961թ. քաղաքի 3 խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններում աշխատել է 9979 մարդ, այսինքն՝ 42 արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի 47,2 %-ը, 1975թ. համապատասխանաբար աշխատել են 20379 մարդ (57,9 % - ը) և 1983 թ-ին՝ 35831 (71,7 %-ը): Ի դեպ, քաղաքի ամբողջ տնտեսությունում աշխատողների թիվը 1970 թ. 54322 մարդուց 1987թ. հասել է 76546-ի՝ ավելանալով 22224 մարդով կամ տարեկան միջինը 1307 մարդով: Համեմատության համար նշենք, որ մեր կողմից ուսումնասիրված 52 ձեռնարկություններում աշխատողների ավելացման տարեկան միջինն ավելի բարձր է՝ 1500 մարդ:

Պակաս հետաքրքիր չեն նաև աշխատողների թվի շարժի ցուցանիշներն ըստ տնտեսության առանձին ճյուղերի (տե՛ս աղ. 4):

**Թեթև արդյունաբերություն.** 1975 թ. տեքստիլ արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ միավորվեցին՝ կազմելով «Մայիսյան ապստամբության անվան բամբակեղենի արտադրական միավորումը»: Միավորումը դասվել է ԽՍՀՄ խոշորագույն կոմբինատների շարքին, և Լեռնականը ճանաչվել է տեքստիլագործների քաղաք: Դա

պայմանավորված է եղել ոչ միայն թողարկված արտադրանքի ծավալներով, այլև աշխատողների թվաքանակով: 1975 թ. Լենինականի 13 թեթև արդյունաբերական ձեռնարկություններում աշխատել են 17400 մարդ, որ կազմել է քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի 49,4 %-ը և հանրային տնտեսությունում զբաղվածների թվի 29,4 %-ը: 1975 թ. 1961 թվականի համեմատ քաղաքի թեթև արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվն ավելացել է 3104 մարդով: 1983 թ. աշխատողների թիվը կազմում էր 23453 մարդ, ինչը 6053-ով ավելի էր 1975 թ. համեմատ: Այդ տարիներին աճի արագ տեմպերը բացատրվում են ոչ միայն քաղաքում գտնվող ձեռնարկությունների խոշորացմամբ, այլև հարակից քաղաքային և գյուղական բնակավայրերում նորերի կառուցմամբ:

*Աղյուսակ 4* 1961-1987թթ. Լենինականի բանվորների և ծառայողների թվի շարժի ցուցա նիշները ( ՀՀ ԱԿԾ-ի Ծիրակի մարզային գործակալության արխիվի տվյալներ, գիրք 7, թերթ. 25):

Տնտեսության ճյուղերը	1970թ.	1975թ.	1979թ.	1983թ.	1987թ.	1961թ.
ամբողջ տնտեսությունում	54349	59224	65262	73012	76546	36512
արդյունաբերություն	26540	28654	32816	37008	38125	21150
շինարարություն	3824	5528	4061	4485	4678	2358
գյուղատնտեսություն	450	758	608	696	817	1256
տրանսպորտ և կապ	5285	6198	6381	7130	7954	3544
առևտուր և հաս. սնունդ	4052	5072	5464	6038	6237	1897
լուս., առողջապահություն	8643	8893	9804	10834	11589	3543
պետակ. ապարատ	370	616	726	763	826	220
բնակ., կուլմուսալ և այլ ճյուղեր	5185	3505	5402	6058	6320	2544

Տեքստիլ կոմբինատն իր մասնաճյուղերն է ունեցել Ալավերդի, Արթիկ և Մարալիկ քաղաքներում, իսկ Չկալովի անվան կարի արտադրական միավորումն ունեցել է 12 մասնաճյուղեր, որոնք տեղաբաշխված են եղել Լենինականում, Ախուրյանում, Պեմզաշենում, Ամասիայում և այլուր: Լենինականի խոշորագույն արտադրական ձեռնարկություններն են եղել Տեքստիլ կոմբինատը, Չկալովի անվան կարի արտադրական միավորումը, Լուկաշինի անվան մանվածքային ֆաբրիկան, Լենինականի կոշիկի ֆաբրիկան: Այդ ձեռնարկություններում 1975թ. աշխատել են թեթև արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի 76,4%-ը, իսկ 1983թ.՝ 79,6%-ը: Քաղաքի թեթև արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի ճնշող մեծամասնությունը, բացառությամբ կոշիկի ֆաբրիկայի, կազմել են 30-49 տարեկան կանայք:

*Մեքենաշինություն.* Մեքենաշինությունը Լենինականի զարգացման համեմատաբար նոր ճյուղ է, այն հատկապես սկսեց զարգանալ 1950-ական թթ., սակայն 1980-ական թթ. արդեն տալիս էր քաղաքի արդյունաբերական արտադրանքի 23-28 %-ը՝ զիջելով միայն թեթև արդյունաբերությանը: Լենինականում մեքենաշինությունը ներառել է էլեկտրատեխնիկական, հղկող հաստոցների, «Մտրոմնաշինա», դարբնոցամանլիչային սարքավորումների, կոմպրեսորների, անալիտիկ սարքերի, մագնիսահաղորդիչների, հեծանիվի, միկրոէլեկտրաշարժիչների, ավտոբուսների վերանորոգման գործարանները: Մեքենաշինության զարգացման առաջին տարիներին, ավելի կոնկրետ՝ 1961թ. քաղաքի 15 մեքենաշինական ձեռնարկություններում աշխատել է 3397մարդ, ինչը կազմել է արդյունաբերությունում աշխատողների թվի 16,1%-ը և հանրային տնտեսությունում զբաղվածների 9,3-ը%: 1961-ից մինչև 1988թ. աղետալի երկրաշարժը քաղաքի մեքենաշինական ձեռնարկություններում աշխատողների թվի աննախադեպ աճ է գրանցվել: 1983 թ. մեքենաշինական ձեռնարկություններում աշխատողների թիվը 1961 թ. համեմատ ավելացել է 8263 մարդով կամ աճել է 3,4 անգամ, իսկ 1975 թ. համեմատ՝ 1992-ով կամ աճել է 1,2 անգամ: Լենինականի մեքենաշինական ձեռնարկություններում աշխատողների թվի հիմնական մասը կազմել են 25-49 տարեկան տղամարդիկ:

Լենինականի մեքենաշինական խոշորագույն ձեռնարկություններում՝ Էլեկտրատեխնիկական, Հոկոդ հաստոցների, Մագնիսահաղորդիչների, Միկրոշարժիչների և «Ստրոմնաշինա» գործարաններում 1975 թ. աշխատել է 4948 մարդ, ինչը կազմել է մեքենաշինական ձեռնարկություններում աշխատողների թվի 51,2%-ը, իսկ 1983 թվականին՝ 5506 մարդ կամ 47,2%-ը:<sup>9</sup>

Լենինականի թեթև, մեքենաշինական և շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունները հավասարակշռություն են ապահովել զբաղվածության սեռային հարաբերակցությունում. կանայք հիմնականում աշխատել են թեթև, իսկ տղամարդիկ մեքենաշինական և շինանյութերի արդյունաբերական ձեռնարկություններում:

*Սննդի արդյունաբերություն.* Լենինականի արդյունաբերության մեջ նշանակալի են եղել սննդի արդյունաբերության ձեռնարկությունները: Ի տարբերություն թեթև արդյունաբերությունում և մեքենաշինությունում զբաղվածների թվի աճի, սննդի և շինանյութերի արդյունաբերությունում աշխատողների թվի կտրուկ աճ չի դիտվել, ինչը կարծում ենք առաջին հերթին պայմանավորված է նշված ճյուղերին բնորոշ տեխնոլոգիական սարքավորումների ներդրմամբ: 1983 թ., համեմատած 1961թ. հետ, սննդի արդյունաբերության ձեռնարկություններում աշխատողների թիվն ավելացել է 539 մարդով, իսկ 1975թ. համեմատ՝ 841 մարդով: Սննդի արդյունաբերական ձեռնարկություններում, ինչպես օրինակ՝ Հրուշակեղենի ֆաբրիկայում, աշխատողների թվի ճնշող մեծամասնությունը կանայք են, իսկ Գարեջրի-ածիկի գործարանում և Մսի պահածոների կոմբինատում կանանց և տղամարդկանց թիվը գրեթե հավասարաչափ է բաշխված: Քաղաքի շինարարական արդյունաբերության ձեռնարկություններում աշխատողների թվի ճնշող մեծամասնությունը կազմել են տղամարդիկ:

Բնակչության զբաղվածության թվի շարժը հետազոտելիս կարևոր է նաև ֆիզիկական և մտավոր աշխատանքներով զբաղվածների թվի փոփոխության ցուցանիշների հաշվումը, որը հնարավորություն է տալիս պարզելու տվյալ բնակավայրի տնտեսության ճյուղային զարգացման միտումները: Պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն՝ 1979 թվականին 1970 թվականի համեմատությամբ հանրապետությունում ֆիզիկական աշխատանքով զբաղվածների թիվը ավելացել է 306,1 հազարով կամ տարեկան միջինը 4,8%-ով, մտավոր աշխատանքով զբաղվածներինը՝ 154,6 հազարով կամ տարեկան միջինը 6,0 %-ով,<sup>10</sup> իսկ Լենինականում ֆիզիկական աշխատանքով զբաղվածների թիվն ավելացել է 7,8 հազարով կամ տարեկան միջինը 4,2 %-ով, մտավոր աշխատանքով զբաղվածներինը՝ 3,2 հազարով կամ 5,1%-ով:<sup>11</sup> Ինչպես տեսնում ենք, այդ տարիներին Լենինականի բնակչության ֆիզիկական և մտավոր աշխատանքով զբաղվածների թվի տարեկան աճի տեմպը զիջել է հանրապետության համապատասխան ցուցանիշի միջինին:

Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվաքանակի աճը պայմանավորված է եղել մի շարք գործոններով: Նախ՝ այդ տարիներին քաղաքում կառուցվեցին նոր արդյունաբերական ձեռնարկություններ, մասնավորապես մեքենաշինական, ընդարձակվեցին ավելի վաղ կառուցված արդյունաբերական ձեռնարկությունները: Երկրորդ, արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների եկամտի (աշխատավարձի տեսքով) աճի տեմպերը համեմատաբար ավելի բարձր էին, քան մնացած ոլորտներում: Երրորդ, Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղում ավելացավ ինժեներատեխնիկական մասնագետների թիվը, ինչը միանգամայն դրական անդրադարձավ արդյունաբերական համակարգի գործունեության վրա: Չորրորդ, արդյունաբերական համալիրում ընդգրկված (հիմնականում թեթև և մեքենաշինական ձեռնարկություններ) աշխատողները, համեմատած տնտեսության այլ ճյուղերի աշխատողների հետ, ավելի շուտ էին բնակարաններ ստանում: Եվ վերջապես, արդյունաբերությունում աշխատատեղերի պահանջարկն ավելին էր, քան տնտեսության մնացած ճյուղերում: 1970-ական

<sup>9</sup> Շիրակի մարզային արխիվ, ֆ. 9.1 գ. 580:

<sup>10</sup> Խ. Ա վ է տ ի ս յ ա ն, Մովեսական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Եր., 1987, էջ 61:

<sup>11</sup> ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության արխիվի տվյալներ, զիջք 7, թերթ 27:

թվականներին քաղաքի արդյունաբերության զարգացման գլխավոր ճյուղերն էին մեքենաշինությունը, թեթև արդյունաբերությունը և սննդի արդյունաբերությունը: Արդյունաբերությանը զուգընթաց՝ զարգացել է նաև մերձքաղաքային գյուղատնտեսությունը, որը քաղաքային հանրային տնտեսության մեջ աննշան տեղ է զբաղեցրել: Մերձքաղաքային գյուղատնտեսական հողատարածքներում (սելեկցիոն կայան, հարավային քաղաքամերձ տարածք, տնամերձ տարածքներ և այլն) մշակվել են հիմնականում բանջարաբուստանային կուլտուրաներ, դեկորատիվ բուսատեսակներ, մասնավորապես ծաղիկներ, ինչպես նաև զբաղվել են խոշոր եղջերավոր անասնապահությամբ և խոզաբուծությամբ: 1970թ. Լենինականում գյուղատնտեսությամբ զբաղվողների թիվը կազմել է 450 մարդ, իսկ 1987թ.՝ 817 (տես աղ. 4): Այսինքն՝ այդ տարիների ընթացքում Լենինականում գյուղատնտեսությամբ զբաղվողների թիվն աճել է 81,5 % կամ տարեկան միջինը՝ 4,7 %-ով, ինչը բավականին բարձր ցուցանիշ է:

Լենինականի լիարժեք տնտեսական գործունեությունն ապահովել է տրանսպորտի համակարգը: Քաղաքում 1970 թ. տրանսպորտի և կապի ոլորտներում զբաղվածների թիվը կազմել է 5285 մարդ կամ քաղաքի տնտեսության մեջ զբաղվածների թվի 9,6%-ը, իսկ 1979թ. 6381 մարդ կամ 9,7%-ը: 1970-1979 թթ. Լենինականի տրանսպորտի և կապի ոլորտներում աշխատողների թիվն ավելացել է 1096 մարդով կամ տարեկան միջինը 121-ով:

Լենինականի ժողովրդական տնտեսության համակարգում կարևոր տեղ են զբաղեցրել կրթության և առողջապահության ոլորտները: 1970 թ. այդ ոլորտներում աշխատողների ընդհանուր թիվը կազմել է 8643 մարդ կամ հանրային տնտեսությունում աշխատողների ընդհանուր թվի 15,9%-ը, իսկ 1979թ.՝ 9804 մարդ կամ 15%-ը: Այսինքն՝ 1970 - 1979թթ. այդ ոլորտներում աշխատողների թիվն ավելացել է 1161-ով, տարեկան միջինը՝ 129-ով: Համեմատության համար նշենք, որ 1970թ. Լենինականում 1000 բնակչի հաշվով բուժաշխատողների թիվը կազմել է 18 մարդ, 1979թ.՝ 21: Բուժանձնակազմի կադրերի պատրաստման գործում էական նշանակություն են ունեցել Լենինականի բժշկական ուսումնարանը, ուսուցիչների պատրաստման գործում՝ մանկավարժական ինստիտուտը և ուսումնարանը: 1975/76 ուսումնական տարում քաղաքում ուսուցիչների թիվը կազմել է 1859 մարդ: Նշված ուսումնական տարում քաղաքի հանրակրթական դպրոցներում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը կազմել է 35 հազար: Այսինքն 1000 սովորողի հաշվով ուսուցիչների թիվը կազմել է 53: Այդ ուսումնական տարում Լենինականի 40-ից ավել դպրոցներում դասավանդող ուսուցիչներից 970-ը ունեցել են բարձրագույն կրթություն: 1966/1967 ուսումնական տարում բուհերում և տեխնիկումներում ուսանողների թիվը կազմել է 4000 մարդ, 1970/71 ուս. տարում՝ 6000 մարդ, որից մանկավարժական ինստիտուտում սովորել են ուսանողների ընդհանուր թվի 22,6%-ը, պոլիտեխնիկ ինստիտուտում՝ 32,2%-ը: 1979/80 ուս.տարում Լենինականի բուհերում և տեխնիկումներում սովորել է 8500 մարդ: 1979թ., 1970 թվականի համեմատությամբ, քաղաքում ուսանողների թիվը ավելացել է 2500 մարդով: Այդ ուսումնական տարում քաղաքի բուհերում դասավանդող դասախոսների թիվը 400-ից ավելին էր: Նրանց մոտ կեսը գիտությունների թեկնածուներ էին, իսկ 11-ը գիտության դոկտորներ: <sup>12</sup>Ասենք նաև, որ այդ տարիներին քաղաքի երիտասարդների մի սովորյալ հատված ուսանել է մեր հանրապետության և Միության այլ քաղաքների բուհերում. նրանց կոնկրետ թիվը պարզել հնարավոր չէ:

1970-1987թթ. Լենինականի բնակչության զբաղվածության թվի շարժի վերաբերյալ նյութական արտադրության (արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ, գյուղատնտեսություն, կապ) և սպասարկման (գիտություն, կրթություն, մշակույթ, առողջապահություն, հասարակական առևտուր, և այլն) ոլորտների և տնտեսության այլ ճյուղերի տվյալների վերլուծության հիման վրա ամփոփելով այդ ժամանակահատվածում Լենինականի բնակչության զբաղվածության մասին մեր դիտարկումները՝ կարելի է փաստել, որ աշխատանքային տարիք մուտք գործած (16 տարին լրացած) բնակչության թիվը այդ տարիներին կրկնակի աճգամ գերազանցեց կենսաթոշակի աճգամ (54 տարեկան կամայք և 60 տարեկան տղամարդիկ) բնակչության թիվը, ինչը հանգեցրեց

<sup>12</sup> Ленинскан, статистический сборник, Ленинанкан, 1984, стр 99-100.

քաղաքի բնակչության աշխատանքային ռեսուրսների որոշակի ավելցուկի և նպաստեց սեզոնային արտազմա աշխատանքի մեկնողների թվի աճին: Դրան հակառակ՝ 2005-2015թթ. աշխատանքային տարիք մուտք գործող Գյումրու բնակչության թիվը մեր մտատավոր հաշվարկներով 2,5 անգամ կզիջի կենսաթոշակի տարիք մուտք գործողների թվին: Սա բացատրվում է նրանով, որ 2005 թ. հետո Գյումրիում կենսաթոշակի կանցնեն 1945-1955թթ. ծնվածները, որոնց թիվը քաղաքում ավելին է 1990-ական թթ. ծնվածների թվից:

## ДИНАМИКА ЗАНЯТОСТИ НАСЕЛЕНИЯ г. ЛЕНИНАКАНА В 1970-1987гг.

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Бояджян* \_\_\_

Изучая статистические и демографические данные занятости населения Ленинакана за 1970-1987гг., можно констатировать, что численность трудоспособного населения (включая лиц, достигших 16 лет), вдвое превосходила численность лиц пенсионного возраста (мужчин-60 лет и женщин-54 года), что создало излишек свободной рабочей силы и благоприятствовало увеличению численности выезжающих на временные заработки.

Сравнительный анализ рождаемости 1945-1955гг., статистических и демографических данных естественного прироста населения города за 90-ые годы показывает, что в 2005-2015гг. число лиц пенсионного возраста в 2,5 раза будет превосходить численность трудоспособного населения, родившегося в 1990-2000гг., что приведет к нехватке рабочей силы и создаст трудности экономического развития города.